ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«15» 02 2024 թ. № 63-Ա

ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԲԻԼԴԻՆԳ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը և ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության 17-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/9 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00144692, գործունեության հասցե՝ Հր. Քոչարի փ. 4, Արաբկիր, 0033, Երևան) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման հիմքով, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, մասնավորապես՝ «Բիլդինգ Կապիտալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի շտկված ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԱԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
15 փետրվարի 2024թ.
ք. Երևան